ԼԵՈՆԻԴԸ 52 ՏԱՐԵԿԱՆ Է

Եթե 1992թ. հունիսի 21-ին չարագույժ գնդակը չդիպներ Լեոնիդ Ազգալդյանին, հիմա նա 52 տարեկան կլիներ: Երկնային կյանքում շարունակվելու նախատեսված նրա կես դարը այս աշխարհում հասցրեց անկորնչելի արժեքներ երկնել եւ ծնունդ տալ դրանցից գլխավորին՝ «Ազատագրական բանակին», որի հիմնադիր-հրամանատարը եղավ: Ազգային մեծ իղձի մարմնացում-բանակը ռազմական նորօրյա հաղթանակների սկիզբը դրեց եւ հետագայում շղթաներից ազատեց նաեւ հայոց պատմական որոշ տարածքներ: Առասպել-մարդու ծննդյան օրվա առթիվ տպագրում ենք նրա ընկերոջ՝ ՍԱՐԳԻՍ ՀԱՅԲԱՆՅԱՆԻ խոսքը:



Լեոնիդն ինձ համար զարմանահրաշ գերմարդ էր: Ես այդպիսի մարդ չեմ ճանաչել ոչ Սիյուռեում, ոչ Մուսալեռում, ոչ Կիլիկիայում, ոչ Արեւմտյան Հայաստանում, ոչ աշխարհի ցանկացած ծայրում: Ազգային հողին վրա բազմահազար մարդկանց հետ եմ շփվել, Լեոնիդը միակ մարդն է, որին ներկայացնելու համար բառերը չեն հերիքի: Օրվա 24 ժամը, որ ընդունված է աշխարհում, նրա համար 48 էր, 64 էր: Ինչպես էր հասցնում մի օրվա մեջ իր բոլոր գործերը տեղավորել, մարդ միայն կարող է զարմանալ: Հանգարգչային ձեւով աշխատանքի էր ունակ: Իր տեսությամբ ստեղծող–արարող մարդ էր: Իրոք, միայն զարմանք եւ հրաշք էր նա:

Ես ուզում եմ կրկնել Լեոնիդի այն խոսքերը, որ նա ասաց «Ազատագրական բանակի Արցախի ճակատի» հրամանատար Վլադիմիր Բալայանի հիշատակի մոտ. «Վլադիմիրի նման մարդ ազգը ծնում է 3–4 դարը մեկ»: Ինքը եւս, նախասահմանված անձ լինելով, այդպիսին էր:

Ով Լեոնիդ Ազգալդյանին ճանաչում էր, ասում էր, որ նա մեծ մարդ է: Ուրեմն նաեւ մեծ հրամանատար, մեծ զինվոր, մեծ գրագետ, մեծ մտավորական ու... երեխա: Նրա մեծությունը մինչեւ իր կյանքի վերջին պահը մնաց գագաթին վրա: Նա երբեք տատանումներ չի ունեցել, թշնամիներ՝ նույնպես: Ինքը ադրբեջանցիներին թշնամի չէր համարում: Գիտեր, որ նրանք մեզ չեն հասկանում եւ ուզում էր, որ գիտակցեն հայուն պայքարը, հայուն արդար դատը: Ռազմագերիներուն վերաբերվում էր՝ ինչպես մայրը իր զավակին: Այդ մարդկային վերաբերմունքը վերափոխում էր գերիներուն, նրանք համոզվում էին, որ հայը իրենց հշխանություններու կողմե նկարագրվածը չէ:

Եթե Լեոնիդը կարողանար իր գործունեությունը ծավալել Արցախ աշխարհին մեջ, Հայաստանին մեջ՝ մենք ավելի մեծ եւ մշտական հաղթանակներու կհասնեինք: Նրա ստեղծած ռազմակառույցի՝ «Ազատագրական բանակի» նպատակը մեր բռնագրավված տարածքները թշնամուց ազատելն էր: Նա ցույց տվեց, թե ինչպես կարելի է բանակ ստեղծել եւ ղեկավարել այն:

Երբ Մարտակերտում, Շահումյանում, Արցախի մյուս վայրերում Լեոնիդի տղերքը երեւում էին, մարդիկ իրենց ապահով էին զգում: Ոչ մի նշանակություն չուներ՝ որքան զենք ու մարտիկ կա, կարեւորը նրանց ներկայությունն էր, որ արդեն իսկ հանգստություն էր ներշնչում բնակչությանը: Ուրեմն այդ մարդը ինչպես է կարողացել ինքզինքը սիրել տալ, հարգել տալ:

Իր ապրած ժամանակ Լեոնիդ Ազգալդյանն արդեն լեգենդ էր դարձել: Այդ բախտը շատ քչերին է վիճակվում: